Արձանագրություն N 3

«ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՊՁԲ-20/23» ծածկագրով գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Սպիտակ

29.06.2020թ.
ժ. 12:00

Մասնակցում են՝

Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Միրզոյան

Հանձնաժողովի անդամներ՝ Լ. Համբարյան, Մ. Թամամյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Ավետիսյան

Ընդունել ի գիտություն, որ «Տրակ» ՍՊԸ-ն 03.06.2020թ. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոք էր ներկայացրել խնդրելով պարտավորեցնել ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՊՁԲ-20/23 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 01.06.2020թ. թիվ 4 արձանագրության 1-ին կետը և ընդունել «Ֆալկոն» ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 22.06.2020թ. ընդունել է որոշում (որոշումը տեղեկագրում հրապարակվել է 24.06.2020թ.) որով «Տրակ» ՍՊԸ-ի կողմից 03.06.2020թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2020/73 ծածկագրով բողոքը ամբողջությամբ բավարարել է:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով՝ գնահատող հանձնաժողովը որոշեց.

1. «Ֆալկոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել:

Որոշումը ընդունվել է՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով գնահատող հանձնաժողովը որոշեց.

2. Գնահատող հանձնաժողովի նիստը կասեցնել և ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՊՁԲ-20/23 ծածկագրով գնման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցներին՝ «Տրակ» ՍՊԸ-ին և «Ագրոտեխնիկ ԱՄ» ՓԲԸ-ին հրավիրել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների, որը տեղի կունենա 2020 թվականի հուլիսի 1-ին ժամը 12:00-ին, ք. Սպիտակ, Շահումյան 7 հասցեում (Սպիտակի համայնքապետարանի վարչական շենք):

Որոշումը ընդունվել է՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ _____ Հ. Միրզոյան

Անդամներ՝ _____ Լ. Համբարյան

_____ Մ. Թամամյան

Քարտուղար՝ _____ Ա. Ավետիսյան